«Յուքոմ» ՓԲԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
ՀՀ, Երևան 0015, Գ. Լուսավորիչ 9
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

"UCOM" CJSC
"Yerevan Plaza" business center
9 G. Lusavorich, Yerevan 0015, RA
www.ucom.am

For further questions, please call
444 from Ucom numbers
+374 (11) 444 444 from other numbers
E-mail: 444@ucom.am

SPEEDTEST AWARDS 2017

# ԱՄՊԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# CLOUD SERVICES AGREEMENT

Ք. Երևան 06.04.2020 թ.

Yerevan

Սույն ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») կնքվել է «Յուքոմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Յուքոմ», «Կատարող», «մենք», «մեզ» կամ «մեր»), ի դեմս գլխավոր տնօրեն Արա Խաչատրյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի («Ձեր» կամ «Պատվիրատու»), ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, միջև հետևյալի մասին.

This Services Agreement (hereinafter "Agreement") is executed between "Ucom" CJSC (hereinafter "Ucom", "Contractor", "we", "us" or "our"), represented by the General Director Ara Khachatryan, acting in accordance with the Charter, and ""NORK" Social Services Technology and Awareness Centre" FUND (hereinafter "you", "your" or "Customer"), represented by the Executive Director Armen Abrahamyan, acting in accordance with the Charter, as follows:

## 1. ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

## 1. DEFINITIONS USED IN THIS AGREEMENT

1.1. Ծրագրային ապահովում՝ ցանկացած միջնորդ ծրագիր, հավելված կամ գործիք, որը Ձեզ տրամադրվում է Յուքոմի կողմից Ծառայությունները ներբեռնելու համար՝ նպատակ ունենալով հեշտացնել Ձեր հասանելիությունը Ծառայություններին, դրանց հետ աշխատանքը և (կամ) դրանց օգտագործումը:

1.1. Software – shall mean any software agent, application or tool that Ucom makes available to You for download specifically for purposes of facilitating Your access to, operation and (or) use of the Services.

1.2. Երրորդ անձանց բովանդակություն՝ երրորդ անձանց կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվող ծրագրային ապահովում, տվյալներ, տեքստ, պատկերներ, ձայնագրություններ և տեսագրություններ, լուսանկարներ և այլ բովանդակություն ու նյութեր՝ ցանկացած

1.2. Third Party Content - shall mean all software, data, text, images, audio, video, photographs and other content and material, in any format, that are obtained or derived from third party sources outside of Ucom that You may access through, within, or in conjunction with Your use of the Services. Examples of Third Party

ձևաչափով, որոնք չեն վերաբերում Յուքոմի ծառայություններին և որոնք Ձեզ հասանելի են դարձել Ծառայությունների միջոցով կամ Ձեր կողմից Ծառայությունների օգտագործման հետ կապված: Երրորդ անձանց բովանդակության օրինակ են հանդիսանում սոցիալական կայքերում պարունակվող տվյալները, բլոգներից տեսանյութերի հեռարձակման RSS ուղիները, ինչպես նաև Յուքոմի տվյալների գրադարանները, բառարանները և մարքեթինգային տվյալները: Երրորդ անձանց բովանդակությունը ներառում է երրորդ անձանց նյութերը, որոնք Դուք ստացել եք Յուքոմի կողմից մատուցվող Ծառայությունները կամ տրամադրվող ցանկացած գործիք օգտագործելու ժամանակ:

Content include data feeds from social network services, RSS feeds from blog posts, Ucom libraries, dictionaries, and marketing data. Third Party Content includes third-party sourced materials accessed or obtained by Your use of the Services or any Ucom-provided tools.

1.3. **Օգտատերեր՝** Ծառայությունների մասով՝ այն աշխատողները, կապալառուները կամ վերջնական օգտատերերը՝ կախված կոնկրետ դեպքից, ովքեր լիազորված են Ձեր կողմից կամ Ձեր անունից օգտագործել Ծառայությունները՝ սույն Պայմանագրին և Ձեր պատվերին համապատասխան: Այն Ծառայությունների մասով, որոնք հատուկ մշակված են Ձեր հաճախորդների, գործակալների, պատվիրատուների, մատակարարների կամ այլ երրորդ անձանց կողմից Ձեզ հետ փոխազդելու նպատակով Ծառայություններին հասանելիություն ունենալու համար, այդպիսի երրորդ անձինք են համարվում «Օգտատերեր»՝ համաձայն սույն Պայմանագրի և Ձեր պատվերի պայմանների:

1.3. **Users** – shall mean, for Services, those employees, contractors, and end users, as applicable, authorized by You or on Your behalf to use the Services in accordance with this Agreement and Your order. For Services that are specifically designed to allow Your clients, agents, customers, suppliers or other third parties to access the Services to interact with You, such third parties will be considered "Users" subject to the terms of this Agreement and Your order.

1.4. **Ձեր բովանդակությունը՝** Ձեր կամ Ձեր ցանկացած օգտատիրոջ կողմից տրամադրվող և Ծառայություններում ներառված կամ դրանց միջոցով աշխատող ծրագրային ապահովում, տվյալներ (ներառյալ Անձնական տվյալները) տեքստ, պատկերներ, ձայնագրություններ և տեսագրություններ, լուսանկարներ, հավելվածներ, որոնք չեն հանդիսանում Յուքոմի հավելվածներ, կամ երրորդ անձանց հավելվածներ՝ ցանկացած ձևաչափով: Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները, ներառյալ Յուքոմի ծրագրային ապահովումը, Յուքոմի այլ պրոդուկտներն ու ծառայությունները, Յուքոմի մտավոր սեփականության օբյեկտները և դրանց հիման վրա ստեղծված ածանցյալ ստեղծագործությունները չեն

1.4. **Your Content** – shall mean all software, data (including Personal Data), text, images, audio, video, photographs, non-Ucom or third party applications, and other content and material, in any format, provided by You or any of Your Users that is stored in, or run on or through, the Services. The Services under this Agreement, Ucom software, other Ucom products and services, and Ucom intellectual property, and all derivative works thereof, do not fall within the meaning of the term "Your Content." Your Content includes any Third Party Content that is brought by You into the Services by Your use of the Services or any Ucom-provided tools.

հանդիսանում «Ձեր բովանդակությունը»: Ձեր բովանդակությունը պարունակում է Յուքոմի մատուցած Ծառայությունները կամ տրամադրած գործիքները օգտագործելու ժամանակ Ձեր կողմից Ծառայություններում ներառված երրորդ անձանց ցանկացած բովանդակություն:

## 2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2.1. Սույն Պայմանագրի համաձայն Յուքոմը Ձեզ մատուցում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող՝ http://www.ucloudspace.am/ պորտալում (այսուհետ՝ "Պորտալ") սահմանված ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ» կամ «Ծրագրային Ծառայություններ»), իսկ Դուք վճարում եք դրանց դիմաց Պայմանագրով և/կամ Պորտալով սահմանված չափով և կարգով: Եթե այլ բան սահմանված չէ սույն Պայմանագրում, ապա Դուք ունեք Պորտալում սահմանված Ծառայությունն օգտագործելու ոչ բացառիկ իրավունք: Դուք կարող եք թույլ տալ Ձեր Օգտատերերին Ծառայություններն օգտագործել սահմանված նպատակով և պատասխանատվություն եք կրում վերջիններիս կողմից սույն Պայմանագրի պայմանների կատարման համար:

2.2. Ծառայությունների մատուցման ժամանակահատվածում մենք կարող ենք փոփոխություններ կատարել Ծառայություններում, ի թիվս այլ փոփոխությունների, օրենսդրությունում, նորմերում, կանոններում, տեխնոլոգիաներում, արտադրության գործընթացի առանձնահատկություններում, համակարգի օգտագործման բնույթում և Երրորդ անձանց բովանդակության հասանելիության մեջ տեղի ունեցած փոփոխությունները դրանցում արտացոլելու համար:

2.3. Դուք իրավունք չունեք և չեք կարող թույլ տալ կամ հանձնարարել ուրիշներին (ա) Ծառայություններն օգտագործել այլ անձանց անհանգստություն պատճառելու, նրանց կամ նրանց գույքին վնաս հասցնելու, կեղծ, զրպարտական, անհանգստացնող և վիրավորական բնույթի նյութեր հրապարակելու, գաղտնիության դրույթը խախտելու, անհանդուրժողականություն, ռասայական խտրականություն և ատելություն

## 2. USE OF THE SERVICES

2.1. Pursuant to this Agreement Ucom shall provide the services (hereinafter the "Services"), listed in the http://www.ucloudspace.am/ portal (hereinafter the "Portal"), acting as an integral part hereof, available to You and You will pay for the Services as decribed in the Agreement. Except as otherwise stated in this Agreement, You have the non-exclusive right to use the Services, listed in the Portal. You may allow Your Users to use the Services for the purpose defined herein, and You are responsible for their compliance with this Agreement.

2.2. During the services period, we may update the Services to reflect changes in, among other things, laws, regulations, rules, technology, industry practices, patterns of system use, and availability of Third Party Content.

2.3. You may not, and may not cause or permit others to: (a) use the Services to harass any person; cause damage or injury to any person or property; publish any material that is false, defamatory, harassing or obscene; violate privacy rights; promote bigotry, racism, hatred or harm; send unsolicited bulk e-mail, junk mail, spam or chain letters; infringe property rights; or otherwise violate applicable laws, ordinances or regulations; (b) perform or disclose any benchmarking, availability or

սերմանող գաղափարներ քարոզելու կամ վնաս պատճառելու, զանգվածային բնույթի անցանկալի/չպահանջված էլեկտրոնային հաղորդագրություններ, գովազդային հաղորդագրություններ, սպամ կամ շղթայական նամակներ ուղարկելու, սեփականության իրավունքները խախտելու կամ այլ կերպ գործող օրենսդրությունը, հրամանագրերը կամ նորմերը խախտելու նպատակով, (բ) իրականացնել Ծառայությունների էտալոնային, հասանելիության կամ արդյունավետության թեստավորում կամ բացահայտել այդպիսի թեստավորման արդյունքները, (գ) իրականացնել ցանցի հայտնաբերմանը, պորտերի և ծառայությունների նույնականացմանը, խոցելիության հայտնաբերմանը և գաղտնաբառերի բացահայտմանն ուղղված թեստավորումներ, Ծառայություններին հեռակա հասանելիության կամ չարտոնված ներթափանցման թեստավորում կամ բացահայտել այդպիսի թեստավորումների արդյունքները (այսուհետ՝ «Ընդունելի օգտագործման քաղաքականություն»): Ի լրումն սույն Պայմանագրով և Ձեր պատվերով մեզ տրված իրավունքներին՝ Ընդունելի օգտագործման քաղաքականության խախտման դեպքում մենք իրավունք ունենք ձեռնարկել ուղղիչ միջոցառումներ՝ ընդհուպ մինչև նշված քաղաքականության դրույթները խախտող նյութերի հեռացումը կամ այդպիսի նյութերին հասանելիության կասեցումը:

performance testing of the Services; or (c) perform or disclose network discovery, port and service identification, vulnerability scanning, password cracking, remote access or unauthorized penetration scanning or disclose the results of such scanning (hereinafter the "Acceptable Usage Policy"). In addition to the rights granted to us pursuant to this Agreement and Your order, in case of violation of the Acceptable Usage Policy, we shall have the right to undertake corrective measures, up to removal of or suspension of access to the materials that violate the Acceptable Usage Policy.

2.4. Յուքոմի՝ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմանները կիրառելի են սույն Պայմանագրի հիման վրա Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ այնքանով, որքանով վերաբերելի են նշված հարաբերություններին և Ծառայություններին:

2.4. The relations of the Parties based on the Agreement will also be governed by Ucom General terms and conditions for provision of electronic communication and other related services at the extant that the regulatiosnare in the scop of the relastions and the terms of this Agreement.

## 3. ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ

## 3. FEES AND PAYMENT

3.1. Սույն Պայմանագրով վճարման ենթակա բոլոր գումարները պետք է վճարվեն հաշիվը ներկայացնելուց հետո, ոչ ուշ քան հաշվի մեջ նշված վճարման վերջնաժամկետի օրը: Պատվիրվող Ծառայությունների ծավալը գերազանցելու դեպքում Դուք պարտավոր եք անմիջապես գնել գերազանցող

3.1. All fees payable under this Agreement are due no later than the due date from the invoice. If You exceed the quantity of Services ordered, then You must promptly purchase and pay fees for the excess quantity.

ծավալը և կատարել համապատասխան վճարումներ:

3.2. Դուք գիտակցում եք, որ պատվիրված Ծառայությունների համար Ձեզ կարող է ներկայացվել մի քանի հաշիվ:

3.2. You understand that You may receive multiple invoices for the Services ordered.

## 4. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

## 4. OWNERSHIP RIGHTS AND RESTRICTIONS

4.1. Դուք և Ձեր լիցենզատուները պահպանում եք Ձեր բովանդակության նկատմամբ բոլոր սեփականության և մտավոր սեփականության իրավունքները: Մենք կամ մեր լիցենզատուները պահպանում ենք Ծառայությունների, դրանց հիման վրա ստեղծված ածանցյալ ստեղծագործությունների, ինչպես նաև սույն Պայմանագրի շրջանակներում մեր կողմից կամ մեր անունից մշակված կամ մատուցված ցանկացած ծառայության նկատմամբ բոլոր սեփականության և մտավոր սեփականության իրավունքները:

4.1. You or Your licensors retain all ownership and intellectual property rights in and to Your Content. We or our licensors retain all ownership and intellectual property rights in and to the Services, derivative works thereof, and anything developed or delivered by or on behalf of us under this Agreement.

4.2. Դուք ունեք Ծառայությունների միջոցով Երրորդ անձանց բովանդակությունն օգտագործելու իրավունք: Երրորդ անձանց բովանդակության նկատմամբ բոլոր սեփականության և մտավոր սեփականության իրավունքները և այդպիսի բովանդակության օգտագործումը կարգավորվում են երրորդ անձանց կողմից սահմանված՝ Ձեր և երրորդ անձանց միջև գործող առանձին պայմաններով:

4.2. You have the right to use Third Party Content through the Services. All ownership and intellectual property rights in and to Third Party Content and the use of such Third Party Content is regulated by separate conditions, established by third parties and agreed upon between You and third parties.

4.3. Սույն Պայմանագրի և Ձեր պատվերի կատարման նպատակով և դրանց համաձայն՝ Դուք մեզ իրավունք եք վերապահում Ծառայությունները մատուցելու նպատակով տեղադրել, օգտագործել, մշակել, ցուցադրել և փոխանցել Ձեր բովանդակությունը: Դուք միանձնյա պատասխանատվություն եք կրում Ձեր բովանդակության ճշգրտության, որակի, ամբողջականության, իրավաչափության, հուսալիության և պատշաճության, ինչպես նաև Ձեր բովանդակության հետ կապված բոլոր իրավունքների ձեռք բերման համար, որոնք անհրաժեշտ են Յուքոմին Ծառայությունները մատուցելու համար:

4.3. You grant us the right to host, use, process, display and transmit Your Content to provide the Services pursuant to and in accordance with this Agreement and Your order. You have sole responsibility for the accuracy, quality, integrity, legality, reliability, and appropriateness of Your Content, and for obtaining all rights related to Your Content required by Ucom to provide the Services.

4.4. Դուք իրավունք չունեք, ինչպես նաև չեք կարող թույլ տալ կամ հանձնարարել ուրիշներին (ա) փոփոխություններ կատարել Ծառայություններում,

4.4. You may not, and may not cause or permit others to: (a) modify, make derivative works of, disassemble, decompile, reverse engineer, reproduce,

դրանց հիման վրա ստեղծել ածանցյալ ստեղծագործություններ, իրականացնել Ծառայությունների որևէ մասի (ներառյալ ծրագրերի կողմից ստեղծվող տվյալների կառուցվածքները կամ նմանատիպ նյութերը) կազմաքանդում, դեկոմպիլյացիա, հակառակ ինժեներիա, վերարտադրություն, վերաթողարկում, ներբեռնում կամ կրկնօրինակում, եթե միայն օրենքով չի պահանջվում թույլ տալ այդպիսի գործողությունների կատարումը՝ փոխազդելու հնարավորություն ստեղծելու համար, (բ) հասանելիություն ունենալ Ծառայություններին կամ օգտագործել դրանք Յուքոմի համար մրցակցային հանդիսացող պրոդուկտների կամ ծառայությունների ստեղծման կամ աջակցման (ուղղակի կամ անուղղակի) համար, կամ (գ) Ծառայությունները լիցենզավորել, վաճառել, փոխանցել, զիջել դրանց նկատմամբ իրավունքները, տարածել, պատվիրակել, թույլ տալ ժամանակային տարանջատմամբ կամ ծառայությունների բյուրոյի տեսքով դրանց համատեղ օգտագործումը, կոմերցիոն շահագործումը կամ Ծառայությունները մատուցել որևէ երրորդ անձի՝ սույն Պայմանագրով կամ Ձեր պատվերով չհամաձայնեցված նպատակով:

republish, download, or copy any part of the Services (including data structures or similar materials produced by programs), unless required to be permitted by law for interoperability; (b) access or use the Services to build or support, directly or indirectly, products or services competitive to Ucom; or (c) license, sell, transfer, assign, distribute, outsource, permit timesharing or service bureau use of, commercially exploit, or make available the Services to any third party, except as permitted by this Agreement or Your order.

## 5. ՉԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 5. NONDISCLOSURE

5.1. Սույն Պայմանագրի կատարման նպատակով կողմերը կարող են միմյանց համար բացահայտել գաղտնի տեղեկատվություն («Չբացահայտված տեղեկատվություն»): Չբացահայտված տեղեկատվությունը սահմանափակվում է սույն Պայմանագրում և Ձեր պատվերում սահմանված պայմաններով և գներով, Ծառայություններում ներառված Ձեր բովանդակությամբ, ինչպես նաև բացահայտման պահին որպես գաղտնի նշագրված ողջ տեղեկատվությամբ:

5.1. By virtue of this Agreement, the parties may disclose to each other information that is confidential (“Confidential Information”). Confidential Information shall be limited to the terms and pricing under this Agreement and Your order, Your Content residing in the Services, and all information clearly identified as confidential at the time of disclosure.

5.2. Կողմերի Չբացահայտված տեղեկատվությունը չի ներառում այն տեղեկատվությունը, որը (ա) հանդիսանում կամ դառնում է հանրության համար հասանելի ոչ մյուս կողմի գործողությունների կամ անգործության արդյունքում, (բ) մինչև տրամադրումը գտնվել է մյուս կողմի օրինական տիրապետման ներքո և մյուս կողմին ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի

5.2. A party’s Confidential Information shall not include information that: (a) is or becomes a part of the public domain through no act or omission of the other party; (b) was in the other party’s lawful possession prior to the disclosure and had not been obtained by the other party either directly or indirectly from the disclosing party; (c) is lawfully disclosed to the other party by a third party without disclosure restrictions, or (d) was

տրամադրվել բացահայտող կողմից կողմից, (գ) օրինական կերպով տրամադրվել է մյուս կողմին երրորդ անձանց կողմից՝ առանց դրա բացահայտման սահմանափակումների, կամ (դ) ինքնուրույն մշակվել է մյուս կողմի կողմից:

independently developed by the other party.

5.3. Կողմերից յուրաքանչյուրը համաձայնում է բացահայտող կողմի կողմից Չբացահայտված տեղեկատվությունը ստացող կողմին տրամադրելուց հետո 5 տարվա ընթացքում երրորդ անձանց համար չբացահայտել մյուս կողմի Չբացահայտված տեղեկատվությունը հաջորդ նախադասությունում կողմերի միջև համաձայնեցված նպատակներից բացի այլ նպատակներով: Այնուամենայնիվ, մենք կպահպանենք Ծառայություններում ներառված Ձեր բովանդակության գաղտնիությունը այնքան ժամանակ, որքան այն կհանդիսանա Ծառայությունների մաս: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի բացահայտել Չբացահայտված տեղեկատվությունը միայն այն աշխատողների, գործակալների կամ ենթակապալառուների համար, ովքեր պարտավոր են պաշտպանել այդպիսի տեղեկատվությունը չարտոնված բացահայտումից ոչ պակաս, քան սույն Պայմանագրով նախատեսված չափով, և կողմերից յուրաքանչյուրը կարող է բացահայտել մյուս կողմի Չբացահայտված տեղեկատվությունը որևէ դատավարության շրջանակներում կամ պետական մարմնի պահանջով՝ օրենքով սահմանված կարգով: Մենք կպահպանենք Ծառություններում ներառված Ձեր բովանդակության գաղտնիությունը՝ համաձայն Ձեր պատվերով նախատեսված Ծառայությունների նկատմամբ կիրառելի՝ Յուքոմի կողմից կիրառվող անվտանգության ապահովման մեթոդների:

5.3. Each party agrees not to disclose the other party's Confidential Information to any third party other than as set forth in the following sentence for a period of 5 years from the date of the disclosing party's disclosure of the Confidential Information to the receiving party; however, we will protect the confidentiality of Your Content residing in the Services for as long as such information resides in the Services. Each party may disclose Confidential Information only to those employees, agents or subcontractors who are required to protect it against unauthorized disclosure in a manner no less protective than required under this Agreement, and each party may disclose the other party's Confidential Information in any legal proceeding or to a governmental entity as required by law. We will protect the confidentiality of Your Content residing in the Services in accordance with the Ucom security practices applicable to the Services defined in Your order.

## 6. ՁԵՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## 6. PROTECTION OF YOUR CONTENT

Դուք պատասխանատվություն եք կրում անվտանգության համակարգի ցանկացած խոցելիության և դրա հետևանքների համար, որոնց առաջացման պատճառները կապված են Ձեր բովանդակության (ներառյալ դրանում առկա ցանկացած տեսակի վիրուսները, Տրոյան վիրուսը և այլ վնասակար ծրագրերը) կամ Ձեր կողմից Ծառայությունները սույն Պայմանագրի

You are responsible for any security system vulnerabilities and the consequences of such vulnerabilities, arising from Your Content, including any viruses, Trojan horses, worms or other harmful programming routines contained in Your Content, or from Your use of the Services in a manner that is inconsistent with the terms of this Agreement. You may disclose or transfer Your Content to a third party, and

պայմաններին ոչ համապատասխան օգտագործելու հետ: Դուք կարող եք երրորդ անձանց համար բացահայտել կամ նրանց փոխանցել Ձեր բովանդակությունը: Այդ դեպքում մենք այլևս պատասխանատվություն չենք կրում Յուքոմի գործունեության շրջանակներից դուրս այդպիսի բովանդակության անվտանգության կամ գաղտնիության ապահովման համար:

upon such disclosure or transfer we are no longer responsible for the security or confidentiality of such content outside of Ucom.

## 7. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ ԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

## 7. WARRANTIES, DISCLAIMER AND REMEDIES

7.1. Կողմերից յուրաքանչյուրը հայտարարում է, որ սույն Պայմանագիրն իր կողմից կնքվել է օրինական հիմքով՝ ունենալով դրա համար համապատասխան իրավասությունները: Մենք երաշխավորում ենք, որ Ծառայությունների մատուցման ժամանակահատվածում Ծառայությունները մատուցելու ենք բոլոր էական առումներով գործադրելով կոմերցիոն բոլոր ողջամիտ ջանքերը և ներդնելով մասնագիտական հմտությունները: Ծառայությունները նշված երաշխիքային պարտավորություններին ոչ համապատասխան մատուցելու դեպքում Դուք պարտավոր եք այդ մասին անհապաղ գրավոր ծանուցում ուղարկել մեզ՝ ծանուցման մեջ նշելով Ծառայությունների թերությունները:

7.1. Each party represents that it has validly entered into this Agreement and that it has the power and authority to do so. We warrant that during the services period, we will perform the Services using commercially reasonable care and professional skills in all material respects. If the Services provided to You were not performed as warranted, You must promptly provide us with a written notice that describes the deficiency in the Services.

7.2. ՄԵՆՔ ՉԵՆՔ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԹԵՐԻ ԿԱՄ ԱՆԽԱՓԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՄ ԱՅՆ, ՈՐ ՄԵՆՔ ԿՎԵՐԱՑՆԵՆՔ ԴՐԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ԲՈԼՈՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ, ՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՆ ՁԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԿԱՄ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻՆ: ՄԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԵՆՔ ԿՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵԹԵ ԱՅԴՊԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՊՎԱԾ ԵՆ ՁԵՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ:

7.2. WE DO NOT GUARANTEE FLAWLESS OR UNINTERRUPTED OPERATION OF THE SERVICES, NOR THAT WE WILL REMOVE ALL THE DEFECTS AVAILABLE THEREIN, OR THAT THE SERVICES WILL MEET YOUR REQUIREMENTS OR EXPECTATIONS. WE BEAR NO RESPONSIBILITY FOR THE QUALITY, OPERATION OR SAFETY OF THE SERVICES, IF ANY PROBLEM RELATING THERETO ARISE FROM YOUR CONTENT, OR THIRD PARTY CONTENT, OR THIRD PARTY SERVICES.

7.3. ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԸ ԿԱՄ ՆՐԱՆՑ ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.3. IN NO EVENT WILL EITHER PARTY OR ITS AFFILIATES BE LIABLE FOR ANY INDIRECT,

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ԿՐՈՒՄ ՈՐԵՎԷ ԱՆՈՒՂՂԱԿԻ, ՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ՊԱՏԱՀԱԿԱՆ, ՀԱՏՈՒԿ ՊԱՏՃԱՌՎԱԾ, ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՕԳՈՒՏԻ, ՇԱՀՈՒՅԹԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ), ՎԱՃԱՌՔԻ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿՈՐՍՏԻ ԿԱՄ ՏՎՅԱԼՆԵՐՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՀԱՄԱՐ։

CONSEQUENTIAL, INCIDENTAL, SPECIAL, PUNITIVE, OR EXEMPLARY DAMAGES, OR ANY LOSS OF REVENUE, PROFITS (EXCLUDING FEES UNDER THIS AGREEMENT), SALES, DATA, DATA USE, GOODWILL, OR REPUTATION.

## 8. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ ԼՈՒԾՈՒՄ

## 8. TERM AND TERMINATION

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով: Յուքոմը և Պատվիրատուն կարող են վաղաժամկետ լուծել Պայմանագիրը 60 (վաթսուն) օր առաջ գրավոր ծանուցելով Պայմանագիրը լուծելու մտադրության մասին:

8.1. This Agreement shall enter into force upon signing by both parties and shall act for an indefinite period. Ucom and the Customer shall be entitled to early termination of this Agreement with a 60 (sixty)-day prior notice.

8.2. Մենք կարող ենք կասեցնել Ձեր կամ Ձեր Օգտատերերի հասանելիությունը Ծառայություններին կամ Ծառայությունների օգտագործումը՝ առանց դրա համար պատասխանատվություն կրելու, եթե կարծում ենք, որ (ա) առկա է Ծառայությունների գործառնությանը, անվտանգությանը, ամբողջականությանը կամ հասանելիությանը կամ Ծառայություններում ներառված բովանդակությանը, տվյալներին կամ հավելվածներին ուղղված էական սպառնալիք, (բ) Դուք կամ Ձեր Օգտատերերը Ծառայություններն օգտագործում եք ապօրինի գործողություններ իրականացնելու նպատակով, (գ) հայտնաբերվել է Ընդունելի օգտագործման քաղաքականության խախտման փաստ կամ (դ) եթե դա պահանջվում է գործող օրենսդրությամբ այն դեպքում, երբ Դուք, ենթադրաբար կամ փաստացիորեն, չեք կատարում անձնական տվյալների տրամադրման Ձեր պարտավորությունը: Ողջամիտ և օրենքով թույլատրելի լինելու դեպքում մենք Ձեզ նախապես կծանուցենք այդպիսի կասեցման մասին: Մենք ողջամիտ ջանքեր կգործադրենք Ծառայությունների մատուցման գործընթացն անհապաղ վերսկսելու ուղղությամբ այն բանից հետո, երբ որոշենք, որ

8.2. We may suspend Your or Your Users' access to the Services or Service use, without any responsibility, if we believe that (a) there is a material threat to the functionality, security, integrity or availability of Services or the content, data and applications contained therein, (b) You or Your Users use the Services for illegal purposes, (c) a fact of violation of the Acceptable Usage Policy has been revealed, or (d) if it is required by applicable law in case You, allegedly or actually, fail to perform Your obligation to provide personal data. Where it's reasonable and permitted by law, we will provide a prior notice of such suspension to You. We will use reasonable efforts to recover the Services as soon as possible, if You determine that problem having caused Service suspension is solved. During the suspension period You may access Your content (as on suspension date). Any case of Service suspension for any cause defined herein, shall not exonerate You from Your payment liability under this Agreement.

Ծառայությունների կասեցման պատճառ դարձած խնդիրը լուծված է: Կասեցման ժամանակահատվածում Դուք կարող եք հասանելիություն ունենալ Ձեր բովանդակությանը (այնպես, ինչպես կասեցման օրվա դրությամբ): Սույն կետում նշված պատճառներով Ծառայությունների ցանկացած կասեցում Ձեզ չի ազատում սույն Պայմանագրով նախատեսված Ձեր վճարման պարտավորությունները կատարելու պարտավորությունից:

8.3. Սույն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից կամ սույն Պայմանագրի լուծումից հետո շարունակում են ուժի մեջ մնալ սույն Պայմանագրի՝ պատասխանատվությունից հրաժարման, վնասների հատուցման և վճարների վերաբերյալ դրույթները, ինչպես նաև բոլոր այն դրույթները, որոնք, իրենց բնույթով պայմանավորված, պետք է շարունակեն մնալ ուժի մեջ:

8.3. After expiration or termination of this Agreement the provisions of this Agreement pertaining to disclaimer, remedies and payments as well as all provisions, which by their nature must remain effective, shall continue to remain in force.

## 9. ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

## 9. THIRD-PARTY CONTENT, SERVICES AND WEBSITES

9.1. Ծառայությունները կարող են Ձեզ ընձեռել Ձեր կամ Երրորդ անձանց բովանդակությունը փոխանցելու կամ երրորդ անձանց ինտերնետային կայքերին, հարթակներին, բովանդակությանը, պրոդուկտներին, ծառայություններին և տեղեկատվությանը (այսուհետ՝ «Երրորդ անձանց ծառայություններ») հղում կատարելու կամ այլ կերպ դրանց հասանելիություն ունենալու հնարավորություն: Յուքոմը չի իրականացնում Երրորդ անձանց ծառայությունների վերահսկողություն և պատասխանատվություն չի կրում դրանց համար: Դուք միանձնյա պատասխանատվություն եք կրում Երրորդ անձանց ծառայություններին հասանելիություն ունենալու և դրանց օգտագործման պայմանների կատարման համար, իսկ, եթե Ձեր անունից Յուքոմն է հասանելիություն ունենում Երրորդ անձանց ծառայություններին կամ օգտագործում դրանք Ծառայությունների մատուցման գործընթացին նպաստելու համար, ապա Դուք միանձնյա պատասխանատվություն եք կրում այդպիսի հասանելիության կամ օգտագործման (այդ թվում՝

9.1. The Services may enable You to transfer Your Content or Third Party Content, or link to or otherwise access third parties' websites, platforms, content, products, services and information (hereinafter "Third Party Services"). Ucom does not control and is not responsible for Third Party Services. You are solely responsible for complying with the terms of access and use of Third Party Services, and if Ucom accesses or uses any Third Party Services on Your behalf to facilitate performance of the Services, You are solely responsible for ensuring that such access and use, including through passwords, credentials or tokens issued or otherwise made available to You, is authorized by the terms of access and use for such services. If You transfer or cause the transfer of Your Content or Third Party Content from the Services to a Third Party Service or other location, that transfer constitutes a distribution by You and not by Ucom.

Ձեզ տրամադրված կամ այլ կերպ Ձեզ համար ստեղծված գաղտնաբառերի, մուտքային տվյալների կամ նույնականացնող սարքի միջոցով)՝ ծառայություններին հասանելիություն ունենալու կամ դրանք օգտագործելու համար սահմանված պայմաններին համապատասխանությունն ապահովելու համար: Եթե Դուք Ծառայությունների միջոցով Երրորդ անձանց ծառայություններին կամ այլ վայր եք փոխանցում կամ հանձնարարում եք փոխանցել Ձեր կամ Երրորդ անձանց Բովանդակությունը, ապա այդպիսի փոխանցումը համարվում է կատարված Ձեր, այլ ոչ թե Յուքոմի կողմից:

9.2. Մեր միջոցով հասանելի դարձող ցանկացած Երրորդ անձանց բովանդակություն տրամադրվում է «այնպես, ինչպես կա» և «ըստ հասանելիության» սկզբունքով՝ առանց որևէ երաշխիքի: Դուք ընդունում և համաձայնում եք, որ մենք պատասխանատվություն չենք կրում և պարտավոր չենք իրականացնել Երրորդ անձանց բովանդակության վերահսկողություն, մշտադիտարկում կամ ուղղում: Օրենքով թույլատրելի չափով մենք հրաժարվում ենք որևէ պատասխանատվությունից, որը կարող է առաջ գալ Երրորդ անձանց բովանդակության հետ կապված:

9.2. Any Third Party Content we make accessible is provided on an “as is” and “as available” basis without any warranty of any kind. You acknowledge and agree that we are not responsible for, and have no obligation to control, monitor or correct Third Party Content. To the extent permitted by law, we disclaim all liabilities arising from or related to Third Party Content.

9.3. Դուք ընդունում եք, որ (ա) Երրորդ անձանց բովանդակության բնույթը, տեսակը, որակը և հասանելիությունը Ծառայությունների մատուցման ժամանակահատվածում կարող են ցանկացած պահի փոփոխվել և, որ (բ) Երրորդ անձանց ծառայությունների հետ փոխազդող Ծառայությունների (Facebook™, YouTube™ Twitter™ և այլն) գործառույթները կախված են այդպիսի երրորդ անձանց կիրառական ծրագրավորման ինտերֆեյսերի (API) մշտական հասանելիությունից: Մենք կարող ենք թարմացնել, փոփոխել կամ ձևափոխել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները այդպիսի Երրորդ անձանց բովանդակության, Երրորդ անձանց ծառայությունների կամ API-ների փոփոխության կամ անհասանելիության արդյունքում: Եթե որևէ երրորդ անձ դադարեցնում է Ծառայություններին հասանելիություն ունենալու համար, մեր կարծիքով, ողջամիտ պայմաններով Երրորդ անձանց բովանդակության կամ API-ների տրամադրումը,

9.3. You acknowledge that: (a) the nature, type, quality and availability of Third Party Content may change at any time during the services period, and (b) features of the Services that interoperate with Third Party Services, such as Facebook™, YouTube™ and Twitter™, etc., depend on the continuing availability of such third parties’ respective application programming interfaces (APIs). We may need to update, change or modify the Services under this Agreement as a result of a change in, or unavailability of such Third Party Content, Third Party Services or APIs. If any third party ceases to make its Third Party Content or APIs available on reasonable terms for the Services, as determined by us in our sole discretion, we may cease providing access to the affected Third Party Content or Third Party Services without any liability to You. Any changes to Third Party Content, Third Party Services or APIs, including their accessibility or inaccessibility during the services period, shall not affect Your obligations under this Agreement or respective order and shall not entitle You to request

ապա մենք իրավունք ունենք կասեցնել այդպիսի Երրորդ անձանց բովանդակությանը կամ Երրորդ անձանց ծառայություններին հասանելիությունը՝ առանց Ձեր առջև որևէ պատասխանատվություն կրելու: Երրորդ անձանց բովանդակության, Երրորդ անձանց ծառայությունների կամ API-ների փոփոխությունները, ներառյալ Ծառայությունների մատուցման ժամանակահատվածում դրանց հասանելիությունը կամ անհասանելիությունը, չեն ազդում սույն Պայմանագրով կամ համապատասխան պատվերով Ձեզ համար նախատեսված պարտավորությունների վրա, և այդպիսի փոփոխություններով պայմանավորված՝ Դուք իրավունք չունեք պահանջել վճարված գումարների վերադարձ, երաշխիք կամ այլ տեսակի փոխհատուցում:

refund, warranties or other remedies.

## 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

Կողմերը պատասխանատվություն չեն կրում ծառայությունները չմատուցելու կամ ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու համար, եթե դրա պատճառ են հանդիսանում պատերազմը, թշնամական գործողությունները կամ նենգադրույը (սաբոտաժ), տարերային աղետները, համաճարակը, կողմերից անկախ պատճառներով էլեկտրոնային, հեռահաղորդակցության սարքավորումների կամ համացանցին միանալու միջոցների աշխատանքի խափանումը, կառավարության կողմից կիրառվող սահմանափակումները (արտահանման, ներմուծման կամ այլ թույլտվությունների չտրամադրումը կամ դրանց չեղարկումը) կամ կողմերի ողջամիտ վերահսկողությունից դուրս գտնվող ցանկացած այլ հանգամանք: Կողմերը պարտավորվում են ողջամիտ ջանքեր գործադրել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքները մեղմելու ուղղությամբ: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը տևում է ավելի քան 30 օր, ապա կողմերից յուրաքանչյուրը կարող է չեղարկել չմատուցված Ծառայությունները և չկատարված պատվերները՝ այդ մասին համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելով մյուս կողմին: Սույն կետը չի չեղարկում անհաղթահարելի ուժի

## 10. FORCE MAJEURE

The parties shall bear no responsibility for failure to provide or delay in providing the Services, if it is caused by an act of war, hostility or sabotage; act of God; pandemic; electrical, internet, or telecommunication outage that is not caused by the parties; government restrictions (including the denial or cancelation of any export, import or other license); or other event outside the reasonable control of the parties. The parties undertake to use reasonable efforts to mitigate the effect of a force majeure. If an event of force majeure lasts more than 30 days, each party may cancel the Services that have not been provided and the orders that have not been performed, with a written notice to the other party. The present paragraph shall not revoke the responsibility of parties to use reasonable efforts after the event of force majeure, in accordance with the established procedures, as well as Your payment liability for the provided Services.

ազդեցությունից հետո կողմերի կողմից՝ սահմանված ընթացակարգերին համապատասխան ողջամիտ ջանքեր գործադրելու պարտավորությունը, ինչպես նաև մատուցված Ծառայությունների դիմաց Ձեր վճարման պարտավորությունը:

## 11. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

11.1. Սույն Պայմանագրի շրջանակներում կողմերի կողմից ծանուցումները միմյանց ուղարկվում են գրավոր կերպով:

11.2. Մենք կարող ենք մեր պատվիրատուներին ծանուցումներ ուղարկել Ծառայությունների համար նախատեսված Յուքոմ պորտալի՝ ծանուցումների ուղարկման ընդհանուր ծառայության միջոցով, իսկ միայն Ձեզ վերաբերող ծանուցումները՝ մեզ մոտ գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեով կամ Ձեր հասցեով՝ պատվիրված նամակով կամ փոստային առաքմամբ:

## 12. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԻՋՈՒՄ

Դուք չեք կարող զիջել սույն Պայմանագրով նախատեսված Ձեր իրավունքները կամ փոխանցել Ծառայությունները կամ դրանց նկատմամբ ունեցած շահը որևէ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի:

## 13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

13.1. Դուք համաձայնում եք, որ սույն Պայմանագիրը, Յուքոմի պաշտոնական վեբ կայքի և Պորտալի համապատասխան հղումները և դրանում պարունակվող տեղեկատվությունը միասին հանդիսանում են Ձեր Ծառայությունների վերաբերյալ ամբողջական Պայմանագիր և փոխարինում են այդպիսի Ծառայությունների մասով կողմերի միջև ձեռք բերված բոլոր նախկին և ներկայիս գրավոր կամ բանավոր պայմանավորվածություններին կամ կողմերի կողմից արված գրավոր կամ բանավոր հայտարարություններին:

13.2. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով՝ երկու հավասարազոր

## 11. NOTICES

11.1. Any notice required to be given under this Agreement to either party shall be in writing.

11.2. We may give notices to our customers by means of a general notice on the Ucom portal for the Services, and notices specific to You by electronic mail to Your e-mail address on record in our account information, or by registered mail or post to Your address.

## 12. ASSIGNMENT

You may not assign Your rights under this Agreement or transfer the Services, or any interest therein, to any other individual or entity.

## 13. ENTIRE AGREEMENT

13.1. You agree that this Agreement, relevant references to the website of Ucom, to the Portal and information contained therein, encompasses the entire agreement pertaining to Your Services and supersedes all previous and present understandings between the parties with regard to such Services, whether written or oral, or written or oral representations made by the parties.

13.2. This Agreement is drawn up in Armenian and English languages, in duplicate, both copies having equal legal power. In case of discrepancies between the

օրինակից: Հայերեն և անգլերեն տեքստերի միջև տարաձայնության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

Armenian and English texts, the Armenian version shall prevail.

Պատվիրատու / **Customer**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
““NORK” Social Services Technology and Awareness Centre” FUND

Արմեն Աբրահամյան, Գործադիր տնօրեն
Armen Abrahamyan, Executive Director

Կատարող / **Contractor**

«Յուքոմ» ՓԲԸ
**“Ucom” CJSC**
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873

Արա Խաչատրյան, Գլխավոր տնօրեն
**Ara Khachatryan, General director**

*Հավելված 1*
*Ամպային ծառայությունների*
*մատուցման պայմանագրի*
*Annex 1*
*to the Cloud Services Agreement*

**ք. Երևան / Yerevan**

Մատուցվող Ծառայության (Ծառայությունների) պարամետրերը և գինը
**Key Metrics and Pricing for the Service(s) Provided**

| Ծառայության անվանումը և հիմնական պարամետրերը<br>**Service Name and Key Metrics** | | Ամսավճար<br>(ՀՀ դրամ՝<br>ներառյալ ԱԱՀ)<br>**Monthly Price<br>(in AMD with<br>VAT included)** |
|---|---|---|
| Ամպայինծառայություն<br>**Cloud Service** | **Ամպային տարածության հատկանիշները՝<br>Cloud space parameters:**<br><br>1. CPU 16 core, RAM 64 GB, SSD (iSCSI) 500 GB<br>2. CPU 16 core, RAM 64 GB, SSD (iSCSI) 1.5 TB<br>Networking: Internet speed 200 Mbit/s<br>Number VMs – unlimited<br>Number VPC (Virtual Private Cloud) with virtual routers and network infrastructure – unlimited | 285.000 |

Պատվիրատու / Customer

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
““NORK” Social Services Technology and Awareness Centre” FUND

Արմեն Աբրահամյան, Գործադիր տնօրեն
Armen Abrahamyan, Executive Director

Կատարող / Contractor

«Յուքոմ» ՓԲԸ
"Ucom" CJSC
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570043102134100

ՀՎՀՀ 00024873

Արա Խաչատրյան, Գլխավոր տնօրեն
Ara Khachatryan, General director